



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիդյան

«20» 01 2025թ.

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

**ԲՓ № 009 - 25**

Նախաձեռնող՝

**«ՄԵՌՈՏԻ» ՍՊԸ**

Գալշոյան փ./պ./35 Լեռնագոգ, Արմավիր

Գործունեությունը՝

**Կարմրաշեն-Մասպարայի հրաբխային խարամների  
հանքավայրի արդյունահանման աշխատանքներ  
Արմավիրի մարզ**

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 009 - 25

«20» հունվարի 2025թ.

**Կարմրաշեն-Մաստարայի հրաբխային խարամների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝ «ՄԵՌՈՏԻ» ՍՊԸ  
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվություն  
Տեղադրման վայրը՝ Արմավիրի մարզ, Բաղրամյան համայնք, Լեռնագոգ բնակավայր

**Ներածական մաս.** «ՄԵՌՈՏԻ» ՍՊԸ ընկերության կողմից նախատեսվում է Արմավիրի մարզի Կարմրաշեն-Մաստարայի հրաբխային խարամների հանքավայրի արդյունահանման աշխատանքներ, որի նախագիծը մշակվել է ընկերության տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-110-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի գ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Հայցվող տարածքի հողերը հանդիսանում են համայնքային սեփականության արդյունաբերական և ընդերքօգտագործման նշանակության հողեր:

**Նկարագրական մաս.** Կարմրաշեն-Մաստարայի հրաբխային խարամների հանքավայրը գտնվում է Արմավիրի մարզի Բաղրամյան խոշորացված համայնքի Լեռնագոգ բնակավայրի վարչական սահմաններում:

Տեղամասի մոտակա բնակավայրերն են՝ Լեռնագոգ, Դալարիկ, Քարակերտ, Արտենի բնակավայրերը, Թալին, Արմավիր քաղաքները: Տեղամասը հիմնականում ասֆալտապատ ճանապարհով կապված է Լեռնագոգ և Արմավիրի բնակավայրերի հետ, Դալարիկ ե/գ կայարանը գտնվում է տեղամասից մոտ 3 կմ դեպի հարավ-արևելք հեռավորության վրա:

Կարմրաշեն-Մաստարայի հրաբխային խարամների հանքավայրը Լեռնագոգ բնակավայրի ամենամոտ շինությունից գտնվում է շուրջ 380 մ, Դալարիկ բնակավայրի ամենամոտ շինությունից՝ 2,5 կմ, Քարակերտ ամենամոտ շինությունից՝ 2,3 կմ, Արտենի բնակավայրի ամենամոտ շինությունից՝ 8 կմ հեռավորությունների վրա, իսկ Մաստարա սելավատարը՝ նվազագույնը 500 մ հեռավորության վրա:

Հանքավայրի բացարձակ նիշերը տատանվում են 1000-ից մինչև 1160մ սահմաններում:

Հանքավայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ 40015/30//-հյուսիսային լայնության 43050/30//-արևելյան երկայնության:





Հանքավայրը մտնում է Կարմրաշեն-Մաստարայի սարավանդի մեջ, իրենից ներկայացնում է ոչ մեծ հրաբխային թմբեր: Հանքավայրում հրաբխային խարամների միջին հզորությունը կազմում է 31,2 մ, խարամները իրենցից ներկայացնում են հիմնական կազմի ծակոտկեն հրաբխային ապակի:

Հանքավայրի երկրաբանական կառուցվածքին (ներքևից-վերև) մասնակցում են անդեզիտա-բազալտներով ներկայացված չորրորդական հասակի ապարներ, հրաբխային խարամներ, պիրոկլաստիկ տուֆեր (երևանա-լենինականյան տիպի), և ժամանակակից այլուվիալ-դելյուվիալ առաջացումներ:

Կարմրաշեն-Մաստարայի հանքավայրի տարածքը ջրագուրկ է, աղբյուրները և մակերևութային ջրերը բացակայում են, գրունտային ջրեր չեն հայտնաբերվել: Հանքավայրը կազմող ապարները ճեղքավորված են, խիստ ծակոտկեն և ջրաթափանց, ինչի շնորհիվ թափվող մթնոլորտային տեղումները ներծծվում են ապարների միջով:

Հանքավայրի և նրան հարակից տարածքներում սողանքային երևույթներ, կարստեր և փլուզումներ բացակայում են:

Կարմրաշեն-Մաստարայի հրաբխային խարամների հանքավայրի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, տարածքում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ հաշվառված չեն: Բացահանքի մոտակայքում բացակայում են անտառները, անտառային հողերը:

Կարմրաշեն-Մաստարայի հրաբխային խարամների հանքավայրի հայցվող տարածքի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգով հետևյալն են՝

- |                                  |                                  |
|----------------------------------|----------------------------------|
| 1. Y=8402339.0000 X=4458981.0000 | 5. Y=8402770.0000 X=4458169.0000 |
| 2. Y=8402158.0000 X=4458981.0000 | 6. Y=8402658.0000 X=4458365.0000 |
| 3. Y=8402578.0000 X=4457850.0000 | 7. Y=8402582.0000 X=4458681.0000 |
| 4. Y=8402662.3507 X=4457909.0579 |                                  |

Կարմրաշեն-Մաստարայի տուֆի և հրաբխային խարամի հանքավայրի տուֆի և խարամի պաշարները 01.09.1959 թվականի դրությամբ հաստատվել են ՀԽՍՀ ՊՏՀ-ի 10.11.1959 թվականի N 74 արձանագրությամբ: Հանքավայրի հրաբխային խարամի պաշարները վերահաստատվել են ԽՍՀՄ ՊՊՀ-ի 23.07.1980 թվականի N 8554 արձանագրությամբ և դիտարկվել որպես Կարմրաշեն-Մաստարայի հրաբխային խարամների հանքավայր:

Կարմրաշեն-Մաստարայի տուֆի և հրաբխային խարամի հանքավայրի տուֆերը շահագործվել են մինչև 1984թ.-ը, հանքավայրը կոնսերվացվել է, իսկ հրաբխային խարամների հանքավայրը շահագործվել է 1961թ.-ը:

Կարմրաշեն-Մաստարայի հրաբխային խարամների հանքավայրի մնացորդային պաշարները 01.01.2023թ. դրությամբ, ընդհանուր A+B+C1 կարգերով կազմում են 98405 հազ.մ<sup>3</sup>, այդ թվում՝ A կարգով 12093 հազ.մ<sup>3</sup>, B կարգով 19550 հազ.մ<sup>3</sup>, C1 կարգով 66722 հազ.մ<sup>3</sup>:

Պաշարները բավարարում են ծակոտկեն ապարներից խճին և ավազին ГОСТ 22263-76-ով ներկայացվող, ինչպես նաև ОСТ 21-9-74-ով ակտիվ միներալային հավելանյութերին ներկայացվող պահանջներին:

Հայցվող տարածքը նախկինում անկանոն շահագործվել է, տարածքում խախտված է շուրջ 17 հա մակերես: Հանքավայրում լցակույտեր, հանված, պահեստավորված, պահպանված հողաբուսական շերտ չկան:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից հանքամարմնի տեղադրման պարամետրերից, բացահանքի փաստացի վիճակից և մակաբացման ապարների ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով, առանց հորատանյութի օգտագործման աշխատանքների:





Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը.

- ամենամեծ երկարությունը՝ 1155 մ,
  - ամենամեծ լայնությունը՝ 290 մ,
  - ամենամեծ խորությունը՝ 70 մ,
  - մակաբացման ապարների միջին հզորությունը հայցվող տեղամասի հյուսիսային մասում կազմում է 0.65 մ, արևելյան մասում՝ 2.45 մ,
  - օգտակար հանածոյի միջին հզորությունը՝ 27.22 մ,
  - օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ 7433.1 հազ. մ<sup>3</sup>, այդ թվում ըստ A կարգի 3185,6, ըստ B կարգի՝ 4247,5 հազ. մ<sup>3</sup>,
  - օգտակար հանածոյի արդյունահանվող պաշարների քանակը՝ 6238.49 հազ. մ<sup>3</sup>,
  - բացահանքի օտարման մակերեսը - 27.4 հա:
- Տարեկան 315000 մ<sup>3</sup> արտադրողականությամբ արդյունահանվող պաշար /371655 մ<sup>3</sup> մարվող պաշար/:

Բացահանքի ծառայման ժամկետը նախատեսվում է 20 տարի:

Հայցվող տեղամասի սահմաններում հողաբուսական շերտը բացակայում է:

Բացահանքի մշակումը նախատեսվում է կատարել խորացող, ընդլայնական ընթացաշերտերով, միակող մշակման համակարգով, որտեղ՝ աշխատանքային հանքաստիճանի բարձրությունն ընդունված է 5 մ, հանքաստիճանի թեքության անկյունը՝ 65°, հանքակողերի թեքության անկյունը՝ 50°, անվտանգության առափների լայնությունը՝ 2 մ, աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը՝ 25 մ:

Բացահանքում հանույթային և բարձման աշխատանքների իրականացման համար նախատեսված է 2.0 մ<sup>3</sup> շերտի տարողությամբ HITACHI FN-300LC /կամ HITACHI UN-171LC/ մակնիշի հակառակ թիով էքսկավատոր: Բացահանքից օգտակար հանածոյի տեղափոխումը կատարվելու է սպառողի տրանսպորտային, մակաբացման ապարների տեղափոխումը դեպի արտաքին լցակայան՝ MAN TGA 18.430 մակնիշի ավտոինքնաթափի միջոցով:

Հանքավայրի մակաբացման ապարները ներկայացված են ժամանակակից առաջացումներով, խիստ ճաքճքված տուֆերով, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 243255 մ<sup>3</sup>, այդ թվում՝ ժամանակակից առաջացումները՝ 208500 մ<sup>3</sup>, խիստ ճաքճքված տուֆերը՝ 34755 մ<sup>3</sup>: Մակաբացման ապարները ամբողջությամբ տեղափոխվելու և տեղադրվելու են բացահանքի հյուսիս-արևելյան մասում ձևավորվող արտաքին լցակայան, որի վերջնական դիրքում կունենա կկազմի 8.5 հա մակերեսը, վերին հարթակի մակերեսը՝ 8.0 հա, բարձրությունը՝ 3 մ, շեփի թեքման անկյունը 33-35°:

Բացահանքի շահագործման ընթացքում կլինեն հանքավայրի լեռնատեխնիկական և շրջակա միջավայրի պայմաններով պայմանավորված օգտակար հանածոյի կորուստներ, որոնք բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում հանքաստիճանների եզրերի թույլատրելի թեքությունն ապահովելու համար և շահագործողական կորուստները՝ որոնք առաջանում են օգտակար հաստաշերտի տանիքը մակաբացման ապարներից մաքրելու ժամանակ:

Բացահանք տեխնիկական ջրով ջրամատակարարումը կիրականացվի բարձման աշխատանքների ժամանակ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակայանների ջրման նպատակով: Տեխնիկական ջուրը կբերվի ATSP 5.0 /ZIL-431412/ մակնիշի ջրցան-վացող ավտոմեքենայով, խմելու ջուրը կմատակարարվի ջրի ցիստեռնով: Ջրով մատակարարումը կիրականացվի պայմանագրային հիմունքներով:

Կարմրաշեն-Մաստարայի հրաբխային խարամների հանքավայրի արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների կազմի (հողային, ռեսուրսներ ռեսուրսներ, օդային ավազան, կենսաբազմազանություն) կորստներն որոշակի տեխնաժին ճնշումներ:





Բացահանքի շահագործման ընթացքում փոշեառաջացման հիմնական աղբյուրներ կհանդիսանան բացահանքը, լցակույտը, հանույթաբարձման և տրանսպորտային աշխատանքները:

Օդային ավազան արտանետվող վնասակար նյութերը կլինեն՝ անօրգանական փոշին (բուլդոզերային, բարձման և տրանսպորտային աշխատանքներից), ազոտի և ածխածնի օքսիդները և ածխաջրածինները (դիզելային և բենզինային վառելիքով աշխատող մեքենաներից):

Փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով նախագծով նախատեսվում է բարձվող, տեղափոխվող ապարների թրջում և ճանապարհների ու լցակույտերի մակերևույթների ջրցանում չոր եղանակներին, խախտված հողերի ռեկուլտիվացիա:

Վնասակար արտանետումները կրճատելու նպատակով նախատեսվում են՝ մեքենաների և սարքավորումների արտանետիչների վրա գազազտիչ սարքերի տեղադրում, միայն լիովին սարքին վիճակում մեքենաների իրառում, ինչը կպակասեցնեն արտանետումների քանակը:

Շրջակա միջավայրի գնահատման հաշվետվությունում «Эко Центр» ծրագրով կատարվել է նաև արտանետվող վնասակար նյութերի ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների համակարգչային հաշվարկ, որի արդյունքների համաձայն արտանետվող բոլոր նյութերի համար գետնամերձ կոնցենտրացիաները չեն գերազանցի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները:

Բացահանքի շահագործման ընթացքում ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ լեռնային արդյունահանման աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում, իսկ փոշենստեցման համար ջրցանը նախատեսվում է իրականացնել այնպիսի ծավալներով, որը չի առաջացնի արտահոսք:

Օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների ժամանակ որոշակի ազդեցություն կլինի հողային ռեսուրսների վրա, որը կդրսևուկվի (բացահանքի լանդշաֆտի, մակաբացման ապարների լցակույտերի, լեռնային առուների, արտադրական հրապարակների տարածքում) հողի մակերևույթին մթնոլորտ արտանետվող փոշու և աղտոտիչ նյութերի նստեցմամբ, արտադրական հրապարակի նավթամթերքներով հնարավոր աղտոտմամբ:

Հողաձածկույթի աղտոտումը վառելիքաքսուքային նյութերով կանխելու նպատակով նախատեսված է տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործում սարքին վիճակով՝ բացառելով վառելիքի և յուղի պատահական արտահոսքը: Օգտագործված յուղերի հավաքում մետաղյա տակառներում և պահպում հատուկ առանձնացված տեղերում /օրինակ՝ վառելիքաքսուքային նյութերի պահեստում/հետագա ուտիլիզացման նպատակով: Արտադրական հարթակում և աշխատակիցների հանգստյան վայրերում աղբամանների տեղադրում, ինչպես նաև մի շարք այլ բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են գնահատման հաշվետվությունում:

Բացահանքի շահագործման ընթացքում ընդհանուր տնտեսական վնասը (մթնոլորտային օդ, ջրային, հողային ռեսուրսներ) կկազմի 14243375 հազ. ՀՀ դրամ/տարի:

Կարմրաշեն-Մաստարայի հրաբխային խարամների հանքավայրի արդյունահանման աշխատանքների ազդեցությունը բուսական և կենդանական աշխարհի վրա կլինի աննշան, որոնք հնարավորինս կմեղմվեն մեղմացնող միջոցառումները իրականացնելիս:

Բացահանքի շահագործման ընթացքում կառաջանան բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ՝ մեքենաներում ու մեխանիզմներում փոխվող օգտագործված յուղերն ու քսայուղերը, մաշված դետալների փոխարինման ժամանակ առաջացած մետաղի ջարդոնը, մաշված ավտոդողերը ու կենցաղային աղբը: Թափոնների քանակի, վտանգավորության դասի, ծածկագրերի և կառավարման նորոգման միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը տրված է գնահատման հաշվետվությունում և հաշվետվությանը կից թափոնների կառավարման պլանում:





Բացահանքում աղմուկի առաջացման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝ կատարվող արդյունահանման աշխատանքները, բարձման և տեղափոխման աշխատանքները, լցակույտի ձևավորումը, ճանապարհների տրանսպորտի տեղաշարժը, լեռնատրանսպորտային սարքավորումները: Հանքավայրում գումարային հաշվարկային ծայնային բնութագիրը՝ LAէկվ կընդունվի 80դԲԱ:

Աղմուկը տարածքում կանոնակարգելու նպատակով չի կիրառվի աղմկահարույց լեռնատրանսպորտային սարքավորումներ, իսկ անհրաժեշտության դեպքում կտեղադրվեն խլացուցիչներ:

Արդյունահանման տեխնոլոգիական գործընթացների հետ կապված կառաջանան առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված կլինի տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ, ինչը ըստ հաշվետվության չեն գերազանցի սահմանային թույլատրելի մակարդակը:

Բացահանքի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդ, ջրային, հողային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) վրա բացասական ազդեցության կանխարգելման, մեղմացման, նվազեցման նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումները, որոնք թույլ կտան նվազեցնել հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա, այդ միջոցառումներից են՝

- լեռնային տեխնիկայի շարժիչների վառոցքների կարգավորում, լեռնային տեխնիկայի և ավտոինքնաթափերի շարժիչների վրա չեզոքացուցիչների տեղադրում, ինչը կնվազեցնի, կկրճատի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը,
- տաք և չոր եղանակին բեռնվող լեռնազանգվածի, արտադրական հրապարակի, ճանապարհների ջրցանում,
- ներհանքային ճանապարհների բարեկարգում, խճապատում,
- մթնոլորտային օդում փոշու և աղտոտող նյութերի պարբերական մոնիթորինգի իրականացում, ըստ անհրաժեշտության՝ բնապահպանական միջոցառումների վերանայում,
- արտադրական տարածքի կանաչապատում՝ արագ աճող ծառատեսակներով կամ թփերով, պաշտպանիչ-սանիտարական անտառային գոտու հիմնում տարածքի բնակլիմայական պայմաններին համապատասխան ծառատեսակներով:
- շահագործման արդյունքում առաջացող կեղտաջրերի հավաքում անթափանց հորի մեջ, ինչի հետագա դատարկումը կկազմակերպվի մասնագիտացված ընկերության ուժերով և այլն:

Նախատեսված են նաև հնարավոր անբարենպաստ օդերևութաբանական պայմանների, հակավթարային, արտակարգ իրավիճակների կառավարման բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են գնահատման հաշվետվությունում:

Արդյունահանման աշխատանքների ավարտից հետո վերջնական հարթեցման, լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի կենթարկվեն արդյունաբերական հրապարակը՝ 0,022 հա, բացահանքի հատակը՝ 22,4 հա լցակույտի մակերեսը՝ 8.0 հա, ընդհանուրը՝ 30.422 հա:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո կիրականացվի նաև կենսաբանական ռեկուլտիվացիա՝ հարթեցված տարածքները կպարարտացվեն գրանուլացված կենսահումուսով, համալիր օրգանահանքային պարարտանյութերով, այնուհետև կիրականացվի տարածաշրջանի լանդշաֆտներին բնորոշ բույսերի սերմերի ցանք:

Ամբողջ ռեկուլտիվացիոն աշխատանքների արժեքը կկազմի 1860990 հազ. ՀՀ դրամ, ինչը հատկացվելու է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Կառավարության 2021թ.-ի հոկտեմբերի 21-ի N1733-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով:

Կարմրաշեն-Մաստարայի հրաբխային խարամների հանքավայրի շահագործման ընթացքում կիրականացվի նաև շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.





1. մթնոլորտային օդը աղտոտող նյութերի որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ բացահայտելու տարածքում, ավտոճանապարհներին, արտադրական հրապարակի տարածքում հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:

2. Լեռնատրանսպորտային սարքավորումների՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական ստուգումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:

3. Հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:

4. Վայրի բնության, կենսամիջավայրի, Կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակների մշտադիտարկումներ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումների իրականացման համար նախատեսվում է տարեկան մասնահանել 750.0 հազ. ՀՀ դրամ:

**Պարճառարանական մաս.** Արմավիրի մարզի Կարմրաշեն-Մաստարայի հրաբխային խարամների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Լեռնագոգ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացվել են չորս հանրային քննարկումներ, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Մասնակիցների կողմից կարևորվել է հանքավայրի շահագործման աշխատանքներում աշխատատեղերի ստեղծումն ու ընկերության կողմից համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Արմավիրի մարզպետարանից, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, որոնք հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում:

Ամփոփելով ՇՄԱԳ հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից նախատեսվել են բավարար միջոցառումներ:

ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման արդյունքում, հանքավայրի շահագործման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

### Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական լուծումների, բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև համայնքում ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացման ապահովումը:

2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման





հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

3. Գործունեության իրականացման ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը՝ կարևորելով փոշենստեցման նպատակով պարբերաբար ջրցանը:

4. Իրականացնել արտադրական տարածքի կանաչապատում՝ արագ աճող ծառատեսակներով կամ թփերով, պաշտպանիչ-սանիտարական անտառային գոտու հիմնում՝ տարածքի բնակլիմայական պայմաններին համապատասխան ծառատեսակներով, ինչը նախատեսված է հաշվետվությամբ:

5. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին:

6. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

## ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ՄԵՌՈՏԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Կարմրաշեն-Մաստարայի հրաբխային խարամների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Նելլի Նախիբյան